

այս երեւցող աստղը բազմաթիւ աստղերէն մին չէր եւ ոչ ալ «ըստ կարգի արտաքնոցն՝ որ զԾնունդսն նշմարեն» (յԱւեսարանագիրն Մասթոս, էջ 82-84):

դ) Ս. Ծննդեան սասդին աւանդութիւնը ըստ Զափարիա հայոց կաթողիկոսին (Թ. դար). — Ս. Ծննդեան աստղին աւանդութիւնը Զաքարիա կաթողիկոս կը յիշատակէ «Ի ծնունդ Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի» խորագրով ճառին մէջ: Որքան որ ան կը տեսնուի իբր հետեող մը մեծանուն Ոսկեբերանին՝ բայց յայտնի է դարձեալ նոյն և նման ճառերէն անոր գիտական միտքը ու աստեղագիտական լուրջ հմտութիւնը: Դիտելի է որ Ս. Ծննդեան Աստղին աւանդութեան նըկարագրութեան մէջ ծանօթութիւններ ունի աստեղա-տանց, եօթանասուն եւ երկու տեսակ աստղերուն, տասներկու կենդանակերպերուն, եօթը դօտիններուն, ինչպէս նաեւ հինգ մոլորակներու մասին. կը յիշատակէ Բաղաամի և Բաղակի արեւելք տարածուած զըրոյցը, Գօգայ թագաւորութիւնը, Հերովդէսի իր ազգահամարին եղծումը և այլն... «Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքին մէջ Յիսուս ծնած է Հերովդէսի օրով. մոգերը արեւելքէն երուսաղէմ եկան ու կը հարցնէին ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, վասնզի մենք անոր աստղը տեսանք արեւելքի մէջ ու եկանք անոր երկրագոլթիւն ընելու: Մոգերը պարսիկ ըլլալով՝ կը պարապէին աստղաբաշխութեամբ, ըղձութեամբ և հըմայութեամբ, ինչպէս Քաղդէացիները և Նգիպտացիները և թէ անոնց նախնիքները Բաղաամի աշակերտներն էին, վասնզի Բաղաամ նախատինքէն ու ամօթէն մեռաւ Իսրայէլի մէջ, անոնք Միջագետքէն արեւելք գացին և Պարսից աշխարհը մոգութեամբ լեց-